Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի ԹԻՎ ԹԻՎ 48-Ա, 49-Ա, 50-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 48-Ա որոշման վերնագրում փոփոխվող իրավական ակտի կրճատ անվանումը թերի է գրառված: Նկատի ունենալով, որ որոշմամբ կատարվել են մեկից ավելի փոփոխություններ, անհրաժեշտ էր որոշման վերնագրում «փոփոխություն» բառի փոխարեն գրառել «փոփոխություններ»: Որոշման մեջ հղում պետք է կատարվեր նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերին: Որոշման 1-ին կետում չի գրառվել փոփոխվող իրավական ակտի լրիվ անվանումը: Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «Որոշման վերևի մասում «36-Ն» բառերի փոխարեն գրառել «36-Ա» բառերը, քանի որ իրավական ակտը նորմատիվ բնույթի դրույթներ չի պարունակում: Որոշման 1-ին կետում 6-րդ ենթակետից հետո համարակալումը սխալ է կատարված: Հաշվի առնելով իրավական ակտում փոփոխությունների ծավալը առաջարկվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն իրավական ակտն ամբողջությամբ շարադրել նոր խմբագրությամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին կատարված հղումը սխալ է, քանի որ իրավական ակտը ուժը կորցրած չի ճանաչվել:

Որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետում «հիմնադրել» բառից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի **Արթիկ համայնքի մասնակցությամբ**» բառերը (հիմք՝ ՀՀ ՏԻՄ օրենք 18-րդ հոդված, 1-ին մաս, 15-րդ կետ):

Որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետի 1-ին պարբերությամբ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձը ընտրվել է բաժնետերերի խորհրդի անդամ: Համայնքի ավագանին համայնքի մասնակցությամբ ՓԲԸ-ի խորհրդի անդամներ ընտրելու լիազորությամբ օժտված չէ:

Թիվ 49-Ա որոշման նախաբանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1 մասի 1-ին կետին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմանը կատարված հղումներն ավելորդ են, քանի որ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող շինության 70.45 քառակուսի մետր մակերեսով տարածքի պահպանման ու սպասարկման համար համայնքի ավագանու որոշման մեջ հողամաս նախատեսված չէ:

Թիվ 50-Ա որոշումը չի համապատասխանում ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին, համաձայն որի՝ պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական) օգտագործման են տրամադրվում՝ պետական կամ համայնքային հիմնարկներին ու կազմակերպություններին:

Բացի այդ որոշման 1-ին կետն անհասկանալի է շարադրված:

Հղման մեջ նշված չէ, թե ՀՀ կառավարության 12.04.2001 թ. թիվ 286 որոշման որ կետով է ղեկավարվել համայնքի ավագանին:

09.09.2020թ.